



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ  
ՈՐՈՇՈՒՄ**

- ապրիլի 2018 թվականի №Ա  
քաղ. Երևան

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԳԵՎՈՐԳ ՉԱՌԻՇԻ 14/3 ՀԱՍՑԵԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ  
ՄՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով՝

ա) Երևան քաղաքի Գևորգ Չաուշի 14/3 հասցեի բազմաբնակարան շենքի (այսուհետ՝ շենք) յուրաքանչյուր սեփականատիրոջն առանձին բաժանորդ ձևակերպելու վերաբերյալ բնակիչների կողմից լիազորված անձ Աշոտ Թադևոսյանի (այսուհետ՝ Լիազորված անձ) 2016 թվականի սեպտեմբերի 30-ի դիմումը,

բ) առանձին բնակարանների էլեկտրամատակարարման վերաբերյալ շենքի բնակիչների 2017 թվականի սեպտեմբերի 14-ի դիմումը,

գ) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) 2017 թվականի հոկտեմբերի 20-ի №04-ԴԳ-1441 և նոյեմբերի 7-ի №04-ԴԳ-1641 գրությունները, համաձայն որոնց Ընկերությունը չի առարկում շենքի սպառման համակարգը սույն որոշմամբ սահմանված ընթացակարգով էլեկտրական ցանցին միացմանը,

և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների (այսուհետ՝ Կանոններ) 13.8 կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ՝

- 1) շենքի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման համար դիմում ներկայացնում, Ընկերության հետ կառուցվող բազմաբնակարան շենքի կամ կառուցապատվող թաղամասի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր) կնքում է Լիազորված անձը.

- 2) սույն կետի 1-ին ենթակետում նշված դիմումն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Ընկերությունը Լիազորված անձին ներկայացնում է Պայմանագիր կնքելու առաջարկություն՝ նրան տրամադրելով իր կողմից ստորագրված Պայմանագիրը՝ 2 օրինակից.
- 3) Լիազորված անձը, իր կողմից ստորագրված Պայմանագրի հետ մեկտեղ, Ընկերություն է ներկայացնում սույն որոշման հավելվածում նշված շենքի բնակիչների կողմից իրենց բնակարանների սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացման վճարի (յուրաքանչյուր բնակարանի համար 138 000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն, ընդամենը՝ 4 416 000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն) վճարումը հավաստող փաստաթղթերը.
- 4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված միացման վճարի վճարման օրվանից մինչև շենքը փաստացի էլեկտրամատակարարմամբ ապահովելու առավելագույն ժամկետը չի կարող գերազանցել 300 օրը.
- 5) շենքի վերելակի, ընդհանուր օգտագործման այլ էլեկտրասարքավորումների, հասարակական և արտադրական տարածքների սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացման նպատակով նախաձեռնող անձը (անձինք) Կանոններով սահմանված կարգով դիմում է Ընկերություն՝ կից ներկայացնելով Կանոնների 13.2 կետի 3-րդ ենթակետով սահմանված՝ սպառման համակարգը 0.4 կՎ և բարձր եռաֆազ լարման էլեկտրական ցանցին միացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերը և Հանձնաժողովի 2007 թվականի դեկտեմբերի 21-ի №659Ն որոշմամբ հաստատված «Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման վճարները» հավելվածի 1-ին աղյուսակի 2-րդ կետով սահմանված բանաձևով հաշվարկվող միացման վճարի ամբողջական վճարումը հավաստող փաստաթուղթ.
- 6) շենքի՝ սույն որոշման հավելվածում չներառված բնակարանների սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացման նպատակով նախաձեռնող անձը (բնակիչը) դիմում է Ընկերություն՝ կից ներկայացնելով Կանոնների 13.2 կետով սահմանված՝ սպառման համակարգը 0.22 կՎ լարման էլեկտրական ցանցին միացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերը և վճարում միացման վճար՝ 10

կՎԱ հզորությամբ միացման դեպքում՝ 138 000 ՀՀ դրամի և 14 կՎԱ հզորությամբ միացման դեպքում 204 000 ՀՀ դրամի չափով.

- 7) չի թույլատրվում էլեկտրական ցանցին միացման դիմում ներկայացրած անձանցից պահանջել կատարելու վճարումներ, տրամադրելու հատուցում, ներկայացնելու տեղեկատվություն և փաստաթղթեր կամ նրանց ծանրաբեռնել պարտավորություններով, եթե դրանք սահմանված չեն Կանոններով, սույն որոշմամբ, էլեկտրամատակարարման պայմանագրով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը և Լիազորված անձին օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ**

ք. Երևան  
- ապրիլի 2018թ.  
ժամը